



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2014 թվականի N 1068-Ն  
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 12-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<17. Մրցույթների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների կազմման, ինչպես նաև նախապատրաստական աշխատանքները պատշաճ ձևով կազմակերպելու նպատակով, նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմում վարվում է էլեկտրոնային մատյան, որտեղ գրանցվում են մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալները:

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող համապատասխան աշխատակազմը քաղաքացու տվյալներն էլեկտրոնային մատյանում

գրանցում է քաղաքացու կողմից մրցույթին մասնակցելու համար սահմանված դիմումը և փաստաթղթերը ներկայացնելու պահին:

Էլեկտրոնային մատյանում առնվազն նշվում են թափուր պաշտոնի անվանումը և ծածկագիրը, փաստաթղթերի ընդունման օրը, դիմողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, ծննդավայրը, անձնագրի համարը և սերիան, հասցեն, հեռախոսահամարները, փաստաթղթերի անվանումը և էջերի քանակը:

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող համապատասխան աշխատակազմը փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո նույն աշխատանքային օրը, մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների էլեկտրոնային մատյանում գրանցված տվյալները տպում, թելակարում և ներկայացնում է աշխատակազմի ղեկավարին՝ կնքման:»>.

2) 59.1-ին կետի՝

ա. երկրորդ պարբերությունը <<չպետք է պակաս լինեն 50 հարցից>> բառերից հետո լրացնել <<, ընդ որում՝ կոնկրետ կառուցվածքային ստորաբաժանման իրավասությանը վերաբերող հարցերի թիվը չպետք է պակաս լինի 15 հարցից>> բառերով,

բ. չորրորդ պարբերության <<Յուրաքանչյուր մրցույթ անցկացնելուց առնվազն երկու ամիս առաջ>> բառերը փոխարինել <<Յուրաքանչյուր մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում>> բառերով,

գ. հինգերորդ պարբերությունը <<կողավորվում>> բառից առաջ լրացնել <<ուսումնասիրվում, անհրաժեշտության դեպքում համապատասխանեցվում են սույն կարգի պահանջներին,»> բառերով,

դ. ութերորդ պարբերությունը <<երրորդ պարբերությամբ նախատեսված հարցերը:>> բառերից հետո լրացնել <<Այդ իրավական ակտերի ցանկը, քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների համար, Խորհուրդ ներկայացվում է թափուր պաշտոն առաջանալուց հետո երկշաբաթյա ժամկետում:>> բառերով.

3) 76-րդ կետի <<ե>> ենթակետի <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> բառերը փոխարինել <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> բառերով.

4) 77-րդ կետի <<բ>> ենթակետը <<կամ սույն կարգի>> բառերից հետո լրացնել <<կամ Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի N 818-Ն որոշման>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Մ. ԲԱԴԱԼՅԱՆ**